# «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ»
## ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական հաշվետվություններ
2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և նույն ամսաթվին ավարտված տարվա համար

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | էջ |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | 3 |
| Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 4 |
| Հաշվապահական հաշվեկշիռ | 5 |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն | 7 |
| Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվություն | 8 |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ | 10 |

Grant Thornton Amyot

Որակավորված աուդիտորներ և հաշվապահներ
Կառավարման և հարկային խորհրդատուներ
Իրավախորհրդատուներ

## Անկախ աուդիտորի հաշվետվությունը

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ » ՓԲԸ-ի բաժնետերերին,

Մեր կողմից իրականացվել է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշռի, հոկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունների աուդիտը: Նշված ֆինանսական հաշվետվությունների համար պատասխանատվությունը կրում է Բանկի ղեկավարությունը: Մեր պատասխանատվությունն է իրականացված աուդիտի հիման վրա արտահայտել կարծիք Բանկի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են այնպես պլանավորել և իրականացնել աուդիտը, որպեսզի ձեռք բերվի բավարար երաշխիքներ, որ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում էական թերություններ: Աուդիտն ընդգրկում է ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալներն ու համապատասխան ծանոթագրությունները հիմնավորող փաստերի ընտրանքային կարգով ստուգում: Աուդիտն ընդգրկում է նաև Բանկի ղեկավարության կողմից կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատականը: Մենք համոզված ենք, որ մեր կողմից անցկացված աուդիտը բավարար հիմք է հանդիսանում մեր եզրահանգման համար:

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի 2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, 2004թ. հոկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ Հայաստանի Հանրապետության Հաշվապահական Հաշվառման Ստանդարտներին համապատասխան:

Երևան, 24 հունիսի 2005թ.

Grant Thornton Amyot

**Գրանթ Թորնթոն Ամիօ ՍՊԸ**

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ ԱՄԻՕ» ՍՊԸ «GRANT THORNTON AMYOT» LLC ՀՀ ԵՐԵՎԱՆ RA YEREVAN 00040569

ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ ԱՄԻՕ ՍՊԸ

ՀՀ, Երևան 375012
Վաղարշյան 8/1
Հ (374 10) 260 964 / 260 976 / 276 544
Ֆ (374 10) 260 961
Էլ gta@gta.am
Կ www.gta.am

Գրանթ Թորնթոն Ինթերնեշնլի անդամ

Պետական գրանցման վկայական թիվ 01 Ա 035877, Աուդիտորական գործունեության լիցենզիա ԱԾ # 011 տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Ձև 1)

2004թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, ՀՀ, 375010 ք.Երևան, Խանջյան 13 շենքի հարևանությամբ
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Հազ. ՀՀ դրամ

| | Ծանոթ. | 2004թ. |
|---|---|---|
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ | | |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր | | |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | | |
| Շահաբաժնի տեսքով եկամուտներ | | |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ | | |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր | | (80) |
| **Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ** | | |
| Առևտրային նպատակով պահվող ներդրումների զուտ շահույթ/ (վնաս) | | |
| Վաճառքի նպատակով պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս) | | |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս) | | |
| Արտարժութային գործարքներից և փոխարկումից զուտ շահույթ/ (վնաս) | 3 | 316 |
| Այլ գործառնական եկամուտ | 4 | 84 |
| **Գործառնական եկամուտ** | | **320** |
| Ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված զուտ մասհանումներ | | |
| Ընդհանուր վարչական ծախսեր | 5 | (10,138) |
| Այլ գործառնական ծախսեր | 6 | (661) |
| **Շահույթ/(վնաս) հարկումից առաջ** | | **(10,479)** |
| Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում/ | | |
| **Շահույթ (վնաս) հարկումից հետո** | | **(10,479)** |
| Հաշվարկված շահաբաժիններ, այդ թվում՝ | | |
| արտոնյալ բաժնետոմսերի գծով | | |
| սովորական բաժնետոմսերի գծով | | |
| Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ | | |
| Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ | | |

________________Գ. Մաչանյան　　　　________________Գ. Մովսիսյան

Գործադիր տնօրեն　　　　Գլխավոր հաշվապահ

# ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

## ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ (Ձև 2)

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, ՀՀ, 375010 ք.Երևան, Խանջյան 13 շենքի հարևանությամբ
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Հազ. ՀՀ դրամ

| | Ծանոթ. | 2004թ. |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում | 7 | 49,610 |
| Այլ պահանջներ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նկատմամբ | | |
| Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ | | |
| Թանկարժեք մետաղներով հաշիվներ և ավանդներ | | |
| Առևտրային նպատակով պահվող ֆինանսական ներդրումներ | | |
| Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ | | |
| Դրամական շուկայում այլ տեղաբաշխումներ | | |
| Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ | | |
| Վաճառքի համար նախատեսված ներդրումներ | | |
| Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ | 8 | 4,501 |
| Վարձակալության գծով ստացվելիք գումարներ | | |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ | | |
| Ներդրումներ այլ անձանց կանոնադրական կապիտալում | | |
| Կապիտալ ներդրումներ բանկի հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում | | |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 9 | 40,800 |
| Հետաձգված հարկային ակտիվ | | |
| Ստացվելիք տոկոսներ | | |
| Այլ ակտիվներ | 10 | 14,939 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ** | | **109,850** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ** | | |
| ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ պարտավորություններ | | |
| Այլ բանկերի նկատմամբ պարտավորություններ | | |
| Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ | | |
| Հաճախորդներից ներգրավված միջոցներ | | |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ | | |
| Վարձակալության գծով վճարվելիք գումարներ | | |
| Բանկի կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատներ | | |
| Բանկի կողմից թողարկված այլ արժեթղթեր | | |
| Պահուստներ | | |
| Վճարվելիք գումարներ | | |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | | |
| Վճարվելիք տոկոսներ | | |
| Այլ պարտավորություններ | 11 | 329 |

| | | |
|---|---|---|
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **329** |
| **ԿԱՊԻՏԱԼ** | | |
| Կանոնադրական կապիտալ | 12 | 120,000 |
| Պահուստներ | | |
| Գլխավոր պահուստ | | |
| Վերագնահատման պահուստներ | | |
| Կուտակված վնաս | 13 | (10,479) |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ** | | **109,521** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ** | | **109,850** |

____________________Գ. Մաչանյան — Գործադիր տնօրեն

____________________Գ. Մովսիսյան — Գլխավոր հաշվապահ

# ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (Ձև 3)

2004թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, ՀՀ, 375010 ք.Երևան, Խանջյան 13 շենքի հարևանությամբ
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Հաշվետու տարվա սկզբից մինչև հաշվետու ամսաթիվը

Հազ. ՀՀ դրամ

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ | Գլխավոր պահուստ | Վերագնահատման պահուստ | Կուտակված շահույթ | Շահութաբաժինների գծով փոխհատուցում | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| Հոդվածներ | | | | | | |
| Մնացորդը առ 31.12.2003թ | | | | | | |
| Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | | | | | | |
| Վերահաաշվարկված մնացորդը | | | | | | |
| Ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված եկամուտներ և վնասներ | | | | | | |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում | 120,000 | | | | | 120,000 |
| Շահաբաժիններ | | | | | | |
| Զուտ շահույթ/ վնաս | | | | | (10,479) | (10,479) |
| Մնացորդդ առ 31.12.2004թ | 120,000 | | | | (10,479) | 109,521 |

__________________Գ. Մաչանյան

Գործադիր տնօրեն

__________________Գ. Մովսիսյան

Գլխավոր հաշվապահ

## ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
### ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Ձև 4)

2004թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ, ՀՀ, 375010 ք.Երևան, Խանջյան 13 շենքի հարևանությամբ
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

Հազ. ՀՀ դրամ

| | 2004թ. |
|---|---|
| 1. **Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից** | **(29,371)** |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը | (8,227) |
| Ստացված տոկոսներ | |
| Վճարված տոկոսներ | |
| Կորուստների վերականգնում | |
| Ստացված շահաբաժիններ | |
| Ստացված զուտ կոմիսիոն գումարներ | (80) |
| Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ | (7,469) |
| Վճարված հարկեր | (678) |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից | (21,144) |
| Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում) | |
| Ներգրավված միջոցների ավելացում (նվազում) | |
| Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի ներդրումների նվազում (ավելացում) | |
| Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում (ավելացում) | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | (21,144) |
| 2. **Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | **(41,019)** |
| Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | |
| Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում) | |
| Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում) | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (41,019) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | |
| 3. **Դրամական միջոցներ զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից** | **120,000** |
| Վճարված շահաբաժիններ | |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | |
| Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | |
| Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում) | |
| Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում) | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում | 120,000 |

| | |
|---|---|
| Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում) | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | |
| **Դրամական միջոցների զուտ հոսք** | **49,610** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 49,610 |

__________________Գ. Մաչանյան

Գործադիր տնօրեն

__________________Գ. Մովսիսյան

Գլխավոր հաշվապահ

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### *Ծանոթագրություն 1. Իրավական դաշտ*

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ` Բանկ) գրանցվել է 07.10.2004թ-ին և գործում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ` ՀՀ) օրենսդրության շրջանակներում: ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդի 25.02.2005թ-ի թիվ 74 Ա որոշմամբ Բանկին տրվել է բանկային գործունեության լիցենզիա (թիվ 84):

Բանկի իրավաբանական հասցեն է` ք.Երևան, Խանջյան 13/2:

### *Ծանոթագրություն 2. Հաշվապահական ստանդարտներ*

2.1. Հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումը

Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում և ֆինանսական հաշվետվությունները կազմվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների և հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերի համաձայն: Հաշվապահական հաշվառումը վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու որևէ հարցի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերում մոտեցումների բացակայության դեպքում բանկը մշակում է դրանք ինքնուրույն, ելնելով`

- ա. նման հարցերին առնչվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից և ցուցումներից.
- բ. «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված` հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու սկզբունքներից, ֆինանսական հաշվետվությունների տարրերի սահմանումներից, ճանաչման չափանիշներից և չափման հիմունքներից.
- գ. գործնական փորձից` այնքանով, որքանով դա համահունչ է կետ 1-ի «ա» և «բ» ենթակետերով սահմանված դրույթներին:

Բանկում հաշվապահական հաշվառումը վարվում է`

- ա. Հայաստանի Հանրապետության արժույթով` հայկական դրամով.
- բ. կրկնակի գրանցման եղանակով` ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանին և հաշվային պլանի կիրառման հրահանգին համապատասխան.
- գ. անընդհատ` բանկի պետական գրանցման պահից մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նրա վերակազմակերպումը կամ լուծարումը:

Բանկը հաշվապահական հաշվառումը վարելիս և ֆինանսական հաշվետվությունները կազմելիս պահպանում է անընդհատության, հետևողականության, հաշվեգրման, հասկանալիության, էականության, միասնականության, արժանահավատության, համադրելիության, հաշվանցման և սահմանազատման սկզբունքները:

2.2. Եկամուտների և ծախսերի ճանաչում

Բանկում եկամուտների և ծախսերի հաշվառումը տարվում է հաշվեգրման սկզբունքին

համապատասխան: Բանկի թղթակցային հաշիվներից, տեղաբաշխված վարկերից և ավանդներից, պետական կարճաժամկետ պարտատոմսերից, հետգնման համաձայնագրերից և այլ գործարքներից ստացվելիք տոկոսները վերագրվում են եկամուտներին յուրաքանչյուր օր, որոնց հաշվարկման համար հիմք են հանդիսանում համապատասխան պայմանագրերը:

Բանկի կողմից ներգրավված վարկերի, ժամկետային ավանդների և այլ ժամկետային պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները ծախս են ճանաչվում յուրաքնչյուր օր, իսկ ցպահանջ ավանդների և բանկային հաշիվների միջոցների դիմաց տոկոսները՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը, եթե այլ բան նախատեսված չէ համապատասխան պայմանագրով:

Հիմնական միջոցների ամորտիզացիան, ստացվելիք և վճարվելիք վարձավճարները, աուդիտի գծով ծախսերը, և այլ հաշվեգրումները կատարվում են յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը:

2.3. Արտարժութային գործառնություններ

Արտարժույթով կատարված գործարքները հաշվառվում են ՀՀ դրամով կիրառելով գործարքի օրվա ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են՝ կիրառելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ սահմանված հաշվարկային փոխարժեքը: Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից առաջացած օգուտը և վնասը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես եկամուտ կամ ծախս:

2.4. Կանխիկ և կանխիկին հավասարեցված զուտ միջոցներ

Դրամական հոսքերի մասին հաշվետվության առումով դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ կենտրոնական բանկում պահվող միջոցներից և այլ ֆինանսական հաստատություններում ընթացիկ հաշիվներից:

2.5. Պահանջներ այլ բանկերի նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ ֆինանսական հաստատություններում տարբեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ:

2.6. Արժեթղթեր

Բանկի կողմից պետական արժեթղթերը դասակարգվում են երեք կատեգորիաների. առևտրական նպատակներով պահվող, մինչև մարման ժամկետը պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր:

2.7. Հետգնման պայմանագրեր

Հետգնման համաձայնագրերով վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես վաճառքի համար մատչելի արժեթղթեր, իսկ այդ համաձայնագրերով ստացված միջոցները գրանցվում են պարտավորություններ այլ բանկերի նկատմամբ կամ պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հոդվածներում:

Հետգնման համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի դիմաց տրամադրված գումարները գրանցվում են պահանջներ այլ բանկերի նկատմամբ կամ հաճախորդներին տրամադրված վարկեր և փոխատվություններ հոդվածներում:

2.8. Հնարավոր կորուստների պահուստ

Թղթակցային հաշիվների, ներդրված ավանդների, դեբիտորական պարտքերի, տրամադրված վարկերի և այլ փոխատվությունների, ինչպես նաև Բանկի համար վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների գծով ձևավորվում են ընդհանուր և հատուկ պահուստներ կատարվող մասհանումների հաշվին: Ընդհանուր պահուստը ձևավորվում է ստանդարտ ակտիվների գծով կատարվող մասհանումների հաշվին՝ ելնելով ակտիվների գծով ապագա, բայց դեռևս չբացահայտված կորուստների առաջացման հավանականությունից: Հատուկ պահուստը ձևավորվում է վատորակ ակտիվների գծով կատարվող մասհանումների հաշվին՝ ելնելով ակտիվների գծով բացահայտված կորուստների առաջացման հավանականությունից:

Պահուստներ են ձևավորվում նաև սկզբնական արժեքով արտահայտված ներդրումների գծով՝ ելնելով դրանց տևական արժեզրկման հետևանքով հնարավոր կորուստների հավանականությունից:

2.9. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, ներկրման տուրքերը, հարկերը և պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Բանկին ետ վերադարձման, և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախս: Տրամադրված ցանկացած զեղչ և արտոնություն հանվում է գնման գնից: Հետագա ծախսերը, որոնք վերաբերում են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Մյուս բոլոր հետագա ծախսերը պետք է ճանաչվեն որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Հիմնական միջոցների արժեքը փոխհատուցվում է դրանց մաշվածության հաշվեգրման միջոցով: Հիմնական միջոցների մաշվածության հաշվեգրման համար Բանկը սահմանում է հետևյալ նորմերը.

| | Օգտակար ծառայության ժամկետ | Տոկոսադրույք |
|---|---|---|
| Շենքերի և շինություններ | 30 տարի | 3.33% |
| Հաշվողական և համակարգչային տեխնիկա | 4 տարի | 25.00% |
| Փոխադրամիջոցներ | 5 տարի | 20.00% |
| Այլ հիմնական միջոցներ | 5 տարի | 20.00% |
| Մինչև 50,000 դրամ արժողությամբ հիմնական միջոցներ | 3 տարի | 33.33% |

Հիմնական միջոցների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը,

որի համաձայն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում կատարվում են հավասարաչափ հատկացումներ:

2.10. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական ճանաչման ժամանակ ձեռքբերման արժեքով: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է բանկը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջինների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի: Ոչ նյութական ակտիվների մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխելու համար Բանկը կիրառում է մաշվածության հաշվարկման գծային մեթոդը:

2.11. Վարձակալություն

Գործառնական վարձակալության գծով հաշվեգրված վարձավճարները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս գծային հիմունքով:

2.12. Պաշարների ինքնարժեքի որոշում

Բանկի պաշարների (արագամաշ առարկաների) ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ (FIFO) բանաձևով: ԱՄԱԵ բանաձևը ենթադրում է, որ պաշարների (արագամաշ առարկաների) միավորները, որոնք գնվել են առաջինը, ելքագրվում են առաջինը և, հետևաբար միավորները, որոնք մնում են պաշարներում հաշվետու ժամանակաշրջանի վերջում, վերջին գնվածներն են:

2.13. Վերագնահատումներ

Բանկի շենքի, փոխադրամիջոցների, սարքավորումների և այլ հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում՝ Բանկը խորհրդի որոշմամբ կարող է կատարել դրանց վերագնահատում: Այն կատարվում է մասնագիտական որակավորում ունեցող գնահատողների կողմից: Ընդ որում եթե վերագնահատվում է հիմնական միջոցների միավորը, ապա հիմնական միջոցների ամբողջ դասը, որին պատկանում է այդ ակտիվը, նույնպես պետք է վերագնահատվի: Վերագնահատված գումարով հաշվառվող հիմնական միջոցների իրացման դեպքում, իրացված հիմնական միջոցների համապատասխան դասին վերագնահատման պահուստում վերագրված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթին:

## Ծանոթագրություն 3. Արտարժութային գործառնություններից ստացված զուտ շահույթ/(վնաս)

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | արտարժույթի վաճառքից ստացված զուտ շահույթ/(վնաս), | - |
| բ. | արտարժույթի վերագնահատումից ստացված զուտ շահույթ/(վնաս) | 316 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 316 |

## Ծանոթագրություն 4. Այլ գործառնական եկամուտ

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից | 84 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 84 |

## Ծանոթագրություն 5. Ընդհանուր վարչական ծախսեր

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով | 7,189 |
| բ. | ծախսեր սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին հատկացումների գծով | 564 |
| գ. | ծախսեր բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճարների գծով | 1,011 |
| դ. | ապահովագրության ծախսեր | 6 |
| ե. | կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր | 233 |
| զ. | տրանսպորտային ծախսեր | 125 |
| է. | ծախսեր հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով | 682 |
| ը. | գրասենյակային և կազմակերպչական ծախսեր | 328 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 10,138 |

## Ծանոթագրություն 6. Այլ գործառնական ծախսեր

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | գովազդային և ներկայացուցչական ծախսեր | 12 |
| բ. | հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ծախսեր | 535 |
| գ. | այլ ծախսեր | 6 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 661 |

## Ծանոթագրություն 7. Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | թղթակցային հաշիվներ ՀՀ կենտրոնական բանկում | 49,610 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 49,610 |

## Ծանոթագրություն 8. Բանկային գործառնությունների գծով ստացվելիք գումարներ

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | ստացվելիք այլ գումարներ | 4,501 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 4,501 |

## Ծանոթագրություն 9. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

| Շահագործման մեջ գտնվող ակտիվներ | Հող, շենք և գույք | Համակարգչային սարքավորում | Փոխադրամիջոցներ | Այլ հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | |
| Նախորդ տարվա վերջին տվյալները | | | | | |
| Ավելացում | 5,099 | 24,611 | 5,073 | 58 | 34,841 |
| Օտարում | - | - | - | - | - |
| Ընթացիկ ժամանակաշրջանի վերջի տվյալները | 5,099 | 24,611 | 5,073 | 58 | 34,841 |
| **Մաշվածք** | | | | | |
| Սկզբնական մնացորդ | - | - | - | - | - |
| Կուտակված ամորտիզացիա | (80) | (352) | (103) | - | (535) |
| Կուտակված արժեզրկում | - | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ | (80) | (352) | (103) | - | (535) |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | |
| Նախորդ տարվա վերջ | - | - | - | - | - |
| Ընթացիկ ժամանակաշրջանի վերջ | 5,019 | 24,259 | 4,970 | 58 | 34,306 |
| **Շահագործումից դուրս ակտիվներ** | | | | | |
| **Հաշվեկշռային արժեք** | | | | | |
| Նախորդ տարվա վերջին տվյալները | - | - | - | - | - |
| Ավելացում | 1,178 | 5,196 | 0 | 120 | 6,494 |
| Օտարում | | | | | |
| Ընթացիկ ժամանակաշրջանի վերջին տվյալները | 1,178 | 5,196 | 0 | 120 | 6,494 |
| **Մաշվածք** | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Սկզբնական մնացորդ | - | - | - | - | - |
| Կուտակված ամորտիզացիա | - | - | - | - | - |
| Կուտակված արժեզրկում | - | - | - | - | - |
| Վերջնական մնացորդ | - | - | - | - | - |
| **Զուտ հաշվեկշռային արժեք** | | | | | |
| Նախորդ տարվա վերջ | - | - | - | - | - |
| Ընթացիկ ժամանակաշրջանի վերջ | 1,178 | 5,196 | - | 120 | 6,494 |
| **Ընդամենը հիմնական միջոցներ զուտ հաշվեկշռային արժեքով** | | | | | |
| | 6,197 | 29,455 | 4,970 | 178 | 40,800 |

## *Ծանոթագրություն 10. Այլ ակտիվներ*

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | կանխավճարներ աշխատակիցներին և մատակարարներին | 1,270 |
| բ. | կանխավճարներ բյուջեի և պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 15 |
| գ. | ապագա ժամանակաշրջանի ծախս | 13,579 |
| դ. | արագամաշ առարկաներ | 75 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 14,939 |

## *Ծանոթագրություն 11. Այլ պարտավորություններ*

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | կրեդիտորական պարտքեր և տարանցիկ հաշիվներ | 329 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 329 |

## *Ծանոթագրություն 12. Կանոնադրական կապիտալ*

| | | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|---|
| ա. | Վարդան Սիրմաքես | 100% | 120,000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 100% | 120,000 |

## *Ծանոթագրություն 36. Կուտակված վնաս*

| | | 2004թ. հազ. դրամ |
|---|---|---|
| ա. | ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ/վնաս | (10,479) |
| բ. | նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս | - |

| | |
|---|---|
| ԸՆԴԱՄԵՆԸ | (10,479) |

## *Ծանոթագրություն 14. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն ըստ հաշվեկշռային հոդվածների*

2004թ.
հազ. դրամ

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ցպահանջ | մինչև 30օր | 31-ից 90 օր | 91-ից 1տարի | 1-ից 5 տարի | 5տարուց ավել | անժամկետ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | | | | | |
| Դրամական միջոցներ | - | - | - | - | - | - | - | - |
| Պահանջներ ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ | 49,610 | - | - | - | - | - | - | 49,610 |
| Պահանջներ բանկերի նկատմամբ | - | - | - | - | - | - | - | - |
| ՀՀ պետական պարտատոմսեր | - | - | - | - | - | - | - | - |
| Հաճախորդներին տրամադրված վարկեր | - | - | - | - | - | - | - | - |
| Ռեպո համաձայնագրեր | - | - | - | - | - | - | - | - |
| Ռեզիդենտ բանկերից ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր | - | - | - | - | - | - | - | - |
| Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ | - | 1,581 | 1,500 | 11,783 | 4,501 | - | - | 19,365 |
| Կապիտալ ներդրումներ հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում | - | - | - | - | - | - | - | - |
| Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում | - | - | - | - | 34,281 | 25 | - | 34,306 |
| Շահագործումից դուրս գույք | - | - | - | - | - | - | 6,494 | 6,494 |
| Արագամաշ առարկաներ | - | - | - | - | - | - | - | 75 |
| Ստացվելիք տոկոսներ | - | - | - | - | - | - | - | - |
| **Ընդամենը՝ ակտիվներ** | **49,685** | **1,581** | **1,500** | **11,783** | **38,782** | **25** | **6,494** | **109,850** |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | | | | | | | |
| Պարտավորություններ ՀՀ կենտրոնական բանկի նկատմամբ | - | - | - | - | - | - | - | - |
| Այլ բանկերի նկատմամբ պարտավորություններ | - | - | - | - | - | - | - | - |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության նկատմամբ | - | - | - | - | - | - | - | - |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | - | - | - | - | - | - | - | - |
| Պարտավորություններ ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթերի գծով | - | - | - | - | - | - | - | - |
| Ներքին և արտաքին կրեդիտորական պարտքեր (Արձակուրդային ռեզերվ և այլն) | - | 6 | - | 323 | - | - | - | 329 |
| **Ընդամենը՝ պարտավորություններ** | **-** | **6** | **-** | **323** | **-** | **-** | **-** | **329** |

*****